

Հայ-Ռուսական համալսարանում գործող
ՀՀ ԲՈԿ-ի իրավագիտության թիվ 063 խորհրդին

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔ

Արման Մանվելի Գրիգորյանի «Վնասի հատուցման սահմանադրական իրավունքը, համեմատական իրավական վերլուծություն և եվրոպական իրավական չափորոշիչներ» ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք - սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայման ներկայացված ատենախոսության վերաբերյալ

«Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 22-րդ կետի համաձայն պաշտոնական ընդդիմախոսը, ուսումնասիրելով ատենախոսությունը և այդ թեմայով հրատարակված աշխատանքները, գնահատում է ատենախոսության թեմայի արդիականությունը, գիտական դրույթների և եզրահանգումների ճշտությունը, նորությունը և հիմնավորման աստիճանը, ատենախոսության համապատասխանությունը նշված կանոնակարգի 6-րդ, 7-րդ և 8-րդ կետերին:

Փորձենք այս պահանջներին համապատասխան կառուցել մեր կարծիքը Արման Մանվելի Գրիգորյանի «Վնասի հատուցման սահմանադրական իրավունքը, համեմատական իրավական վերլուծություն և եվրոպական իրավական չափորոշիչներ» վերտառությամբ ատենախոսության վերաբերյալ:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, որոնք ներառում են թվով 8 պարագրաֆներ, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Հեղինակին իրապես հաջողվել է պահպանել իրավագիտության հիմնախնդիրների լուծման արդի մեթոդաբանական մոտեցումները, մասնավորապես՝ համակարգային վերլուծության, բազմակողմանիության և այլն:

Հեղինակի կողմից արված հետազոտության նպատակը վնասի հատուցման սահմանադրական իրավունքի կապակցությամբ հանրային իշխանության և անձի միջև ծագող իրավական կապերին վերաբերող հիմնախնդիրների համակողմանի ուսումնասիրումն է՝ այդ թվում մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկայի լույսի ներքո, որի արդյունքների կիրառումը իր նպաստը պետք է ունենա օրենսդրության կամ իրավակիրառ պրակտիկայի մակարդակում անմիջական գործողությամբ օժտված այս հիմնական իրավունքի խախտումներից խուսափելու հարցում:

Նշված նպատակներին հասնելու համար հեղինակը անհրաժեշտ է համարել լուծել հետևյալ խնդիրները՝

ա) Բացահայտել «վնաս» հասկացության սահմանադրական բովանդակությունը, ինչպես նաև ընտրել այն լավագույնս նկարագրող միասնական եզրույթներ, որոնց կիրառմամբ հնարավոր կլինի երաշխավորել անձանց հատուցման տրամադրումը սահմանադրությունից բխող պահանջներին համապատասխանող ցանկացած դեպքի վրա հասնելու պարագայում:

բ) Բացահայտել վնասի հատուցման սահմանադրական իրավունքի բովանդակությունը, այլ կերպ՝ վեր հանել թե՛ հանրային իշխանությունն այս հիմնական իրավունքի ուժով ինչպիսի պարտականություններ է կրում անձանց առջև:

գ) Պարզել վնասի հատուցման և մյուս հիմնական իրավունքների միջև առկա կապերը:

դ) Ուսումնասիրել վնասի հատուցման սահմանադրական իրավունքի սահմանափակման հնարավորությունը և ծավալները:

ե) Ուսումնասիրել վնաս պատճառելու համար հանրային իշխանության պատասխանատվության ծագման սահմանադրական-իրավական պայմանները:

զ) Բացահայտել իշխանության ակտով պատճառված վնասի հատուցման բուն հարաբերությունների իրավաբանական բնույթը՝ բննարկելով դրանք մասնավոր թե՛ հանրային իրավունքի կարգավորման դաշտին պատկանելու հարցը:

ե) Վեր հանել վնասի հատուցման սահմանադրական իրավունքի իրավագոր սուբյեկտների ամբողջական շրջանակը:

ը) Հետագոտել վնասի հատուցման հիմնական իրավունքի վերաբերյալ մարդու իրավունքների եվրոպական դատարանի ձևավորած պրակտիկան:

թ) Առաջադրված խնդիրների լույսի ներքո՝ ուսումնասիրել այլ երկրների վերաբերելի փորձը, իրականացնել իրավահամեմատական վերլուծություն:

Գրախոսվող աշխատանքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հեղինակը հիմնականում հասել է իր առջև դրված գիտական նպատակներին: Այսպես, ատենախոսը մանրամասն վերլուծել է վնասի ինստիտուտը, վերլուծել «վնաս» հասկացության սահմանադրական բովանդակությունը: Հեղինակը արդարացիորեն նշել է, որ ՀՀ Սահմանադրության 62-րդ հոդվածի համաձայն պետական և ՏԻՄ մարմինների կողմից պատճառված բոլոր տեսակի վնասները ենթակա են հատուցման և դրանով իսկ կարևորել «վնաս» եզրույթի միասնական մեկնաբանման կարևորությունը:

Հեղինակը ուսումնասիրել է վնասի հատուցման սահմանադրական իրավունքի սահմանափակման հնարավորությունը և ծավալները:

Բացահայտել վնասի հատուցման սահմանադրական իրավունքի և այլ հիմնական իրավունքների հետ ունեցած կապերը:

Պաշտպանության ներկայացված ատենախոսության թեմայի արդիականությունն հիմնավորելիս հեղինակը նշում է, որ սահմանադիրը, կարևորելով մարդու իրավունքների պաշտպանության սահմանադրական պարտականության իրացման՝ վնասի հատուցման եղանակը, Սահմանադրության մեջ նախատեսել է դրան նվիրված առանձին հոդված՝ ճանաչելով վնասի հատուցումը որպես հիմնական իրավունք: Հեղինակի համոզմամբ դա վկայում է այն մասին, որ սահմանադիրը մեծ գործնական կարևորություն է տալիս պաշտպանության այս միջոցին: Նշենք, որ թեմայի արդիականությունը կասկած չի հարուցում:

Հեղինակը կարողացել է գիտական պատշաճ մակարդակով ներկայացնել տրամաբանական դատողություններ, որոնք աշխատանքը դարձնում են դյուրընթեռնելի: Աշխատանքում ներկայացված համեմատական վերլուծություններն այն դարձնում են առավել համոզիչ: Աշխատանքը տպավորիչ է նաև միջազգային

փորձի բազմակողմանի և խորը ուսումնասիրության տեսանկյունից: Հեղինակը կարողացել է հստակ և համակարգված ներկայացնել բազմաթիվ երկրների՝ Էստոնիայի, Լիտվիայի, Ուկրաինայի, Բելառուսի, ՌԴ-ի և այլ պետությունների և ՀՀ-ի Մահմանադրություններում և Սահմանադրական դատարանների որոշումներում վնասի իմաստիտուտին առնչվող իրավական դիրքորոշումները:

Մանրամասն ուսումնասիրության է ենթարկվել դատական նախադեպային պրակտիկան: Ուսումնասիրվել են ՀՀ Վճռաբեկ դատարանի, ՀՀ Սահմանադրական դատարանի և ՄԻԵԴ-ի վնասի իմաստիտուտին առնչվող նախադեպային ակտերը:

Գիտական աստիճանի հայցման համար ներկայացված աշխատանքի գնահատման հաջորդ որակական պահանջը ատենախոսության եզրահանգումների և պաշտպանության ներկայացված դրույթների նորությունն է:

Գիտական հիմնավորումը տրամաբանության տեսանկյունից որևէ դրույթի ճշմարտացիության օգտին փաստերի և փաստարկների ներկայացումն է: Այս տեսանկյունից պետք է նկատել, որ ատենախոսության բոլոր եզրահանգումների հիմքում ընկած են հստակ աղբյուրագիտական և մեթոդաբանական հիմքեր:

Աշխատանքի արժանիքներից է նաև այն հանգամանքը, որ հեղինակը ոչ միայն պատշաճ մակարդակով հիմնավորել է հետազոտության գիտական նորույթները, այլ նաև եկել է տրամաբանական եզրահանգումների:

Աշխատանքը արժեքավոր է նաև նրանով, որ Հայաստանի Հանրապետությունում առաջին անգամ համալիր կերպով անդրադարձ է կատարվել վնասի հատուցման իմաստիտուտին:

Ներկայացված գիտական հետազոտության դրական կողմերից է նաև այն հանգամանքը, որ հեղինակը հետազոտության յուրաքանչյուր հատվածն ամփոփում է հստակ հետևություններով և եզրակացություններով՝ կատարելով ճիշտ շեշտադրումներ:

Ընդհանուր առմամբ աշխատանքն ավարտուն, ամբողջական հետազոտություն է: Գիտական պատշաճ մակարդակով ներկայացված են տրամաբանական դատողություններ և հետևություններ: Այդուհանդերձ, աշխատանքում տեղ են գտել

նաև որոշ թերացումներ և վրիպումներ: Մասնավորապես, ցանկանում ենք մատնանշել հետևյալները.

1. Աշխատանքը առավել արժեքավոր կլիներ, եթե հեղինակը առանձին գլխով անդրադառնար ՀՀ Սահմանադրության 62-րդ հոդվածի 2-րդ մասին, որը վերաբերվում է ոչ իրավաչափ դատապարտման հիմքով անձին պատճառված վնասների հատուցմանը: Այս խնդրի կարևորությունն ու գործնական նշանակությունը կասկած չի հարուցում: Հեղինակը իր աշխատանքում այս սահմանադրական դրույթին առանձին անդրադարձ չի կատարել և չի հետազոտել հատկապես այս դրույթին վերաբերող սահմանադրաիրավական հիմնախնդիրները: Այդ ուսումնասիրությունը կապահովեր հիշյալ սահմանադրական իրավունքին վերաբերող հետզոտության ամբողջականությունը:

2. Հեղինակը իրավացիորեն նշել է, որ սահմանադիրը մեծ գործնական կարևորություն է տվել մարդու իրավունքների պաշտպանության սահմանադրական պարտականության իրացման՝ վնասի հատուցման եղանակին և նախատեսել է դրան նվիրված առանձին հոդված:

Այս առումով աշխատանքը առավել շահեկան կդարձներ արդար դատաքննության իրավունքի խախտումների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի հատուցման հիմնախնդիրների ուսումնասիրումը: Մասնավորապես գործնական մեծ արժեք կունենար դատավարական ժամկետների խախտման հիմքով անձանց փոխհատուցում տրամադրելուն վերաբերող հիմնախնդիրների ուսումնասիրումը:

3. Աշխատանքում ատենախոսն օգտագործել է օտարալեզու եզրույթ այն դեպքում, երբ դրա հայերեն թարգմանությունը լայն կիրառում ունի: Մասնավորապես մի քանի անգամ աշխատանքում օգտագործվել է դելիկտ եզրույթը (եջեր՝ 67, 97, 98, 145, 185):

4. Աշխատանքի ողջ տեքստում «Սահմանադրություն» բառը օգտագործվել է և՛ մեծատառով և՛ փոքրատառով (ավելի հաճախ փոքրատառով): Մեր

կարծիքով պետք է ցուցաբերել միասնական մոտեցում ու բոլոր տեղերում գրել մեծատառով: Սահմանադիրը ՀՀ Սահմանադրության մեջ «Սահմանադրություն»-ը մեծատառով նշելով առավել կարևորել է Սահմանադրության դերը ՀՀ իրավական համակարգում:

Ինչպես նաև ողջ տեքստում փոքրատառով է գրված Սահմանադրական դատարան-ը: Մեր կարծիքով, նորից առաջնորդվելով ՀՀ Սահմանադրությամբ, այն պետք է գրել մեծատառով:

- 5. Ատենախոսությունում առկա են տեխնիկական բնույթի սխալներ և վրիպակներ: Մասնավորապես՝ տառասխալներ- «ՀՀ քաղաքավիական» (էջ 149), «հնրավորություն» (էջ 56), «այսինք» (էջ 39) և այլն:

Նշված նկատառումները, սակայն, էական չեն, ունեն ոչ սկզբունքային նշանակություն և չեն նսեմացնում ատենախոսության ակնառու արժանիքները: Դրանք առավելապես ցանկություններ են, որոնք, հուսով ենք, հեղինակը հաշվի կառնի իր հետագա հետազոտությունների ժամանակ:

Արման Մանվելի Գրիգորյանի «Վնասի հատուցման սահմանադրական իրավունքը, համեմատական իրավական վերլուծություն և եվրոպական իրավական չափորոշիչներ» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության ուսումնասիրությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ հեղինակը ցուցաբերել է հիմնահարցի լավ իմացություն, ինքնատիպություն, ներկայացրել է պատշաճ գիտական մակարդակով գրված և գործնական զգալի նշանակություն ունեցող աշխատանք և արժանի է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման:

Հեղինակի հրատարակած մենագրությունները և գիտական հանդեսներում տպագրված հոդվածները, ատենախոսությանը վերաբերող թեմաներով գիտական զեկուցումներն արտացոլում են աշխատանքի բովանդակությունը, ինչպես նաև պաշտպանության ներկայացված հիմնադրույթները: Սեղմագրի բովանդակությունը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը:

Արման Մանվելի Գրիգորյանի «Վնասի հատուցման սահմանադրական իրավունքը, համեմատական իրավական վերլուծություն և եվրոպական իրավական

չափորոշիչներ» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թ. օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 8-րդ կետի թեկնածուական ատենախոսության համար սահմանված պահանջներին: Հայաստանյան իրավագիտության մեջ առաջին անգամ ամբողջական, համակարգված հետազոտության են ենթարկվել «վնաս» եզրույթը, վնասի հատուցման սահմանադրական իրավունքի սահմանափակման հնարավորությունները և ծավալները, իշխանության ակտով պատճառված վնասի հատուցման հարաբերությունները, վնասի հատուցման սահմանադրական իրավունքի իրավագոր սուբյեկտների շրջանակը և այլն:

Հետազոտությունը կարելի է գնահատել որպես նոր խոսք գիտության մեջ ՃԲ.00.02 - «Հանրային իրավունք - սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ: Հեղինակը՝ Արման Մանվելի Գրիգորյանը արժանի է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահի օգնական, Վ. Պողոսյան
Ի.Գ.Թ.



Վ. Ռ. Պողոսյանի ստորագրությունը հաստատում եմ:

ՀՀ Սահմանադրական դատարանի
աշխատակազմի ղեկավար՝



Ս. Առաքելյան